ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ (1918-1920 ԹԹ.)

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Տ. Ն.

Գաղտնիք չէ, որ Հայկական հարցում XIX-XX դդ. ընթացքում Անգլիայի վարած քաղաքականությունը նպաստեց և մասամբ պատճառ դարձավ Օսմանյան Թուրքիայում հայերի լայնածավալ կոտորածներին, ապա՝ Առաջին աշխարհամարտի տարիներին՝ Հայոց ցեղասպանությանը[1]: Թվում էր, որ իր անկախությունը վերագտած հայ ժողովուրդը պետականության կերտման ճանապարհին ձեռք կբերի Մեծ Բրիտանիայի օժանդակությունն ու զինակցությունը՝ ի երախտիք Անտանտի հաղթանակին իր մատուցած ծառայությունների և զոհերի: Պատմական իրադարձությունները, սակայն, այլ ընթացք ստացան: Անդրկովկասի հայության նկատմամբ Անգլիան որդեգրեց նենգ ու թրքամետ քաղաքականություն:

1917 թ. Ռուսաստանում սկսված փետրվարյան հեղափոխությամբ ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Անդրկովկասը նետվեցին նոր փորձությունների ոլորտը. Ռուսաստանը ժամանակավորապես և փաստացի (de facto) հրաժարվեց ոչ միայն նվաճված Արևմտյան Հայաստանից, այլև իր կովկասյան տիրույթներից: Արագ կերպով կազմալուծվեց կովկասյան ռուսական ռազմաճակատը, իսկ թուրքերը, վերակազմավորելով իրենց ուժերը , անցան հարձակման՝ նպատակ ունենալով նվաճել ողջ Անդրկովկասը, կապ հաստատել իրենց արյունակից համարվող թուրքալեզու ժողովուրդների հետ: Այդ ճանապարհին, անկասկած, անցնում էր Նախիջևանի, Զանգեզուրի և Ղարաբաղի վրայով և հանգուցավորվելու էր Բաքվում: Թուրքերի հարձակումը ուղղեկցվում էր մուսավաթական կուսակցության օժանդակությամբ, որն արդեն թիկունքից բացահայտ հարձակումներ էր գործում տեղի քրիստոնյա, մասնավորապես հայ ժողովրդի վրա:

1918 թ. գարնանը թուրքերը հայտնվեցին Բաքվի մատույցներում: Շնորհիվ Բաքվի կոմունայի առաջնորդ Ստ. Շահումյանի և հայոց միասնության, հաջողվեց 1918 թ. մարտի 30-ին, 31-ին, ապրիլի 1-ին ջախջախիչ հարված տալ մուսավաթական դիվիզիային, որը նախատեսում էր քաղաքը հանձնել թշնամուն: Բաքվի կոմունայի զինված ուժերի կազմում էին նաև դաշնակցական Համազասպ Սրվանձտյանի գլխավորած հայկական գումարտակները: Այս հաջողությունը, սակայն, տևական չէր, քանզի Անդրկովկասի ժողովուրդներին վիճակված չէր սեփական ուժերով վճռել իրենց ճակատագիրը: Հեղափոխության մեջ հայտնված Ռուսաստանին Անդրկովկասում փոխարինելու եկան թուրք-գերմանական կողոպտիչները, իսկ պատերազմում վերջիններիս պարտությունից հետո նորանկախ հանրապետությունների միջև փոխհարաբերությունները պետք է

---

[1] *Հայկական հարցում և Հայոց ցեղասպանության ընթացքում Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության մասին ավելի մանրամասն տե՛ս* **Սարուխանյան Տ.**, *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915-1918 թթ.), Ե., 2005:*

դառնային տարածաշրջանում Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի մրցակցության առարկան[2]:

Դեռևս 1917 թ. դեկտեմբերի 17-ին Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքվել էր մի գաղտնի պայմանագիր, համաձայն որի, Կուբանը, Հայաստանը (Արևելյան և Արևմտյան), Վրաստանը, Ադրբեջանը, Քրդստանը, ամբողջ Կովկասը վերահսկվելու էին Անգլիայի, իսկ Բեսարաբիան, Ուկրաինան և Ղրիմը՝ Ֆրանսիայի կողմից[3]: Այս պայմանագրով, փաստորեն, դաշնակիցները հերթական անգամ մոռացության տվեցին պատերազմի ընթացքում փոքր ազգերին տված այն խոստումը, որ պատերազմից հետո յուրաքանչյուր ժողովուրդ ազգային ինքնորոշման սկզբունքի շրջանակում պետք է ստանա իր բախտը տնօրինելու իրավունք: Հայերի ազգային ինքնորոշման իրավունքի տնօրինումը, ըստ էության, հանձնվեց Մեծ Բրիտանիային:

1918 թ. հունիսի 4-ին ստորագրված Բաթումի պայմանագրով, Հայաստանը ոչ միայն ստրկացուցիչ զիջումներ կատարեց Օսմանյան Թուրքիային, այլև պայմանագրի 11-րդ հոդվածով պարտավորվեց իր զինված միավորումները դուրս բերել Բաքվից[4]: Պայմանագրի այդ հոդվածի կիրառման արդյունքը, ինչպես նշել է Ստ. Շահումյանը, պետք է լիներ Բաքվի անկումը, իսկ քաղաքը «կհայտարարվեր Ադրբեջանի մայրաքաղաք, բոլոր ոչ մահմեդական տարրերը զինաթափ կարվեին և կկոտորվեին»[5]: Չնայած սրան, Բաքվի կոմունայի, իսկ վերջինիս անկումից հետո նաև Բաքվի Հայոց ազգային խորհրդի շնորհիվ հաջողվեց քաղաքը պահել թուրք-մուսավաթական հարձակումներից մինչև 1918 թ. սեպտեմբեր, որից հետո եղավ այն, ինչը մի նոր սև էջ պետք է բացեր հայ ժողովրդի պատմության մեջ, իսկ այդ էջը պետք է շարադրվեր հայերի «դաշնակից» անգլիացիների ջանքերով: Այս առումով, անհրաժեշտ է փաստել, որ Բաքվի պաշտպանությունն, ըստ էության, Զանգեզուրի, Նախիջևանի, Ղարաբաղի անվտանգության ապահովումն էր, որ նրա անկումը պայմանավորելու էր վերոհիշյալ շրջանների վրա հարձակումների սաստկացումն ու դրանք հայաթափելու, ապա՝ Ադրբեջանին բռնակցելու թուրք-մուսավաթական փորձերը: Այս գործում անգլիացիները նույնպես անմասն չէին:

1918 թ. հուլիսի 31-ին իր լիազորությունները վայր դրեց ժողկոմ Ստ. Շահումյանը: Բաքվի կոմունայի անկումը կտրուկ փոխեց իրադրությունը ողջ Կովկասում: Թուրքական գերազանց ուժերին գրեթե ոչինչ չէր խանգարում տիրելու Բաքվին: Քաղաքի պաշտպանների մոտ սպառվում էր ռազմամթերքը, կրած զգալի կորուստների հետևանքով նոսրացել էին նրանց դիրքերը: Օգոստոսի 4-ին Հայոց ազգային խորհուրդը ստացավ Մուրսիլ փաշայի երկրորդ վերջնագիրը՝ քաղաքը

---

[2] **Ավետիսյան Հր.,** *Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, էջ 156-171:*

[3] *Documents on British Foreign Policy, 1919-1939, First Series, Vol. 3, London, 1919, p. 365.*

[4] **Գալոյան Գ.,** *Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., 1999, էջ 38:*

[5] *Նույն տեղում, էջ 26:*

հանձնելու պահանջով: Նույն օրը Բաքու ժամանեց անգլիացի գնդապետ Ստոքսը՝ մի քանի տասնյակ զինվորներով, իր հետ բերելով այն լուրը, որ շուտով կհասնի անգլիական 5000 հոգուց բաղկացած զորաջոկատը: Օգոստոսի 5-ին իրենց ձեռնարկած հարձակման հետևանքով թուրքերը, տալով շուրջ 1000 սպանված, նահանջեցին: Նույն օրն էլ անգլիացի գեներալ Դյունսթերվիլի գլխավորությամբ աստիճանաբար սկսեցին Բաքու ժամանել անգլիական զորքերը: Բաքվի հերոսական ինքնապաշտպանությունը հաղթանակի նկատմամբ հույսի նոր լիցք ստացավ: Սակայն անգլիացիների մուտքն ադետաբեր եղավ հայության համար: Անգլիացիների հայտնվելը Բաքվում հավասարազոր էր Խորհրդային Ռուսաստանին պատերազմ հայտարարելուն, քանի որ անգամ Ռուսաստանի համար նվաստացուցիչ՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Բաքվի նահանգը մնում էր Ռուսաստանի կազմում[6]:

Բաքվի հերոսամարտը շարունակվեց մինչև 1918 թ. սեպտեմբերի 13-ը: Այդ օրն անգլիացիները, հայերի համար անսպասելի, գեներալ Դյունսթերվիլի գլխավորությամբ լքեցին Բաքուն՝ հեռանալով դեպի Պարսկաստան: Հայությունը մնաց մեն-մենակ: Բազմահազար թուրքական կանոնավոր զորքը և ուղեկցող մահմեդական խուժանը սեպտեմբերի 15-ին, ի վերջո, հաղթահարելով պաշտպանների դիմադրությունը, գրավեցին քաղաքը, և սկսվեց սպանդը: Երեք օր տևած կոտորածի հետևանքով սպանվեցին 30 հազար հայեր, իսկ նրանց ունեցվածքը թալանվեց: Ուշագրավ է, որ, երբ Բաքվի Հայոց ազգային խորհուրդը դիմեց գեներալ Դյունսթերվիլին, որպեսզի գեներալը գեթ 3 օր էլ մնա, մինչև հնարավոր լիներ խաղաղ բնակչությանը նավերով գաղթեցնել, կտրուկ մերժում ստացավ: Դյունսթերվիլի նահանջն անսպասելի էր, նենգ ու հայադավ: Լքելով «դաշնակից» հայտարարված հայ ժողովրդին՝ անգլիացիները Բաքուն թողնելու մասին իրենց որոշման մասին հայտնեցին հեռանալուց մի քանի ժամ առաջ միայն: Մեր կարծիքով, անգլիացիները հավասարապես մեղսակից եղան Բաքվի հայության կոտորածին:

Անգլիացի գեներալը դեռևս 1917 թ. խոստովանել է, որ Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը պետք է ուղղորդվեր ազգամիջյան բախումների սրմանը, որպեսզի կովկասյան ժողովուրդներն իրար սպանելով հեշտացնեին Անգլիայի գերիշխանության հաստատումը Կովկասում[7]: Այս իմաստով, անգլիացիները, ընդհուպ մինչև «Ադրբեջան» կոչվող պետության վիճարկելի տարածքների խորհրդայնացումը, որդեգրեցին թաթարամետ քաղաքականություն՝ զինելով և օժանդակելով կովկասյան թաթարներին ընդդեմ Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի:

Բաքվի դեպքերին և 30 հազար հայության բնաջնջմանը անդրադարձան նաև Մեծ Բրիտանիայի մամուլն ու խորհրդարան: 1918 թ. սեպտեմբերի 20-ին անգլիական մամուլը տարածեց կեղծ լուրեր, Բաքվի հայությանը՝ իբր թե

---

[6] **Ավետիսյան Հր.,** *նշվ. աշխ., էջ 299-326:*

[7] **Վրացեան Ս.,** *Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 172:*

թուրքերի հետ բանակցություններ սկսելու և քաղաքն առանց կռվի նրանց հանձնելու ամբաստանությամբ:

Անգլիական խորհրդարանը հոկտեմբերի կեսերին նույնպես անդրադարձավ Բաքվի դեպքերին և հայերի կոտորածներին: Խորհրդարանի անդամներ Քինզը, Փիլը, Վիլյամսը, Բլիսը արտաքին գործերի նախարարի տեղակալներից՝ լորդ Ռ. Սեսիլից և ռազմական նախարարի տեղակալ Մաչպերսոնից, պահանջեցին պարզաբանել Բաքվի իրադարձությունները՝ մեկնաբանելով հայերի դիրքորոշումը: Անգլիական մամուլը կանխապես տարածել էր հաղորդագրություններ, որ քաղաքը թուրքերին էին հանձնել տեղի հայերը՝ պատճառ դառնալով Դյունսթերվիլի արշավախմբի հեռանալուն: Մեղայական խոսքով հանդես եկող Ռ. Սեսիլը, որը, փոխանակ պարզաբանելու ապատեղեկատվության աղբյուրներն ու դրանց պատճառները, ընդունեց միայն, որ քաղաքը հանձնելու վերաբերյալ «բանակցությունները նախաձեռնվել են Դյունսթերվիլի խորհրդով, երբ նա տեսավ, որ քաղաքի անկումն անխուսափելի է, ուստի, այդ տեսակետից ելնելով, հայերի գործողությունների վերաբերյալ»[8] ոչ մի կըշտամբանք չէր կարող հնչել: Միաժամանակ, Ռ. Սեսիլն իրեն հատուկ բառախաղի միջոցով խուսափեց պատասխանել, թե ինչպես են հայերին վարկաբեկող լուրերը հայտնվել մամուլում: Բնական է, որ անգլիական պաշտոնական մամուլը չէր կարող հրատարակած լինել մի կարծիք, որի ակունքները չլինեին պատերազմական գրաքննության ենթարկող պաշտոնական Անգլիայի պետական գրասենյակներում: Ռազմական նախարարի տեղակալ Մաչպերսոնը, անգլիական պառլամենտի անդամներին ցինիկաբար խորհուրդ էր տալիս չանհանգստանալ Դյունսթերվիլի գլխավորած բրիտանական ռազմարշավախմբի ճակատագրով, քանի որ, համաձայն նրա՝ «բրիտանական ուժն ապահով էր»[9]:

Բաքվի հանձնումը բացեց դեպի Ղարաբաղ տանող բոլոր ճանապարհները: Դրանից քիչ անց Ջեմալ Ջեհեդ բեյը դիմեց Ղարաբաղի հայությանը՝ վայր դնել զենքը, հպատակվել Ադրբեջանի կառավարությանը և խզել բոլոր հարաբերությունները Զանգեզուրում գտնվող Անդրանիկի հետ[10]: Ջեմալ Ջեհեդի պահանջները քննարկվեցին Ղարաբաղի հայության 2-րդ (20-25.IX.1918) և 3-րդ (30.IX. –5.X.1918) համագումարներում: Նկատի ունենալով սպառնալից ուժերի առկայությունն ու ժամանակ շահելու անհրաժեշտությունը՝ որոշվեց, որ Ղարաբաղը պետք է ընդունի Ադրբեջանի կառավարության իշխանությունը: Հոկտեմբերի 2-ին Ադդամ եկավ Նուրի փա-

---

[8] **Սարուխանյան Տ.,** *Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915-1918 թթ.), Ե., 2000, էջ 46: Բաքվի 1918 թ. կոտորածների վերաբերյալ Մեծ Բրիտանիայի խորհրդարանում տեղ գտած քննարկումների մասին ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 46-48:*

[9] *Parliamentary Debates. House of Lords, November 13, 1918. House of Commons, October 23, 24, 30, 31, November 6, 7, 12, 14, 18, 1918, pp. 8-9.*

[10] **Սիմոնյան Հր.,** *Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Ե., 1996, էջ 383-384:*

շան: Ղարաբաղի շուրջը կենտրոնացված էին հսկայական զինված ուժեր[11]: Հոկտեմբերի 5-ին և 6-ին թուրք-մուսավաթական ուժերը գրավեցին Դահրազ, Միրչալու, Վարազաբուն, Փիրջամալ, Խրամորթ, Քյաթուկ, Նախիջևանիկ, Խանաբադ, Քարագլուխ և Ղլիճբաշ գյուղերը: 1918 թ. հոկտեմբերի 9-ին 1500 զինվորից բաղկացած թուրքական զորաջոկատը մտավ նաև Շուշի: Չնայած հայերի ցուցաբերած հնազանդությանը՝ Աղդամից Շուշի տանող ողջ ճանապարհին թուրքերը կոտորում էին, ավերում ու թալանում՝ գործադրելով անասելի բռնություններ: Մտնելով Շուշի, անօրինական համարելով Ղարաբաղի կառավարությունը՝ նրանք լուծարեցին այն, իսկ կառավարության անդամներին ու մի շարք այլ գործիչների բանտ նետեցին: Բանտարկվածների թվում էր նաև Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը[12]:

Իրադարձություններն Անդրկովկասում և ողջ տարածաշրջանում զարգանում էին սրընթաց արագությամբ: Շուտով վրա հասավ Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտության լուրը: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում կնքված զինադադարով, ի թիվս այլ պարտավորությունների, պարտված Թուրքիան հարկադրված էր իր զորքերը դուրս բերել Անդրկովկասից (հոդված 11), Բաթումից և Բաքվից (հոդված 15)[13]: Ուշագրավն այն է, որ 11-րդ հոդվածով թուրքերը պետք է էվակուացնեին Անդրկովկասի տարածքները այն ժամանակ, երբ «տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեին նման պահանջ»[14]: Մուդրոսի զինադադարը Անգլիայի անունից կնքել էր ծովակալ Քալթորփը: 11-րդ հոդվածը տրամաբանորեն հանգեցնում է հետևյալ հարցին. ինչո՞ւ անգլիացիները թուրքերին թույլատրեցին առժամանակ մնալ Անդրկովկասում, նաև Բաքվում: Պատասխանը մեկն է՝ որպեսզի այն չընկներ որևէ երրորդ ուժի ձեռքը՝ լիներ դա բոլշևիկյան Ռուսաստանը կամ էլ Հայաստանի նորաստեղծ հանրապետությունը: Իսկ թե ինչպես էր թուրք ասկյարը այժմ արդեն բնաջնջելու Անդրկովկասի հայությանը, հայերի «դաշնակից» Անգլիային բնավ չէր հետաքրքրում: Պատերազմն ավարտվել էր իր հաղթանակով՝ ի հայտ բերելով նոր շահեր, և պատերազմի ավարը յուրացնելու նոր հնարավորություններ, նաև՝ նոր դաշնակիցներ: Այդ պահից ի վեր Ղարաբաղի հայության ճակատագիրը մեծավ մասամբ պետք է որոշեր նավթային պաշարները յուրացնել ձգտող Մեծ Բրիտանիան:

1918 թ. հունվարի 15-ին Ադրբեջանն արդեն տնօրինող անգլիացիները Ղարաբաղում նահանգապետ դրեցին հայտնի հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովին[15]: Ապրիլի 3-ին անգլիացի գնդապետ Շատելվորդի ստորագրությամբ Բաքվում լույս տեսավ անգլիական պաշտոնական մի հայտարարություն, որի մեջ ասվում էր, որ բժիշկ Սուլթանովն օգտվում է անգլիական

---

[11] Նույն տեղում, էջ 387:

[12] Նույն տեղում, էջ 388:

[13] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.), էջ 538-539:

[14] Նույն տեղում, էջ 538:

[15] **Գալոյան Գ.,** նշվ. աշխ., էջ 66:

հրամանատարության աջակցությունից, և «Ղարաբաղ-Շուշիում Ադրբեջանի դեմ ամեն մի ելույթ կհամարվի որպես բրիտանական կառավարության դեմ ուղղված գործողություն»[16]:

2000-2007 թթ. Մեծ Բրիտանիայի արխիվային նախարարությունում մեր կատարած ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված որոշ անտիպ փաստաթղթեր առավել ևս ամրապնդեցին մեր այն համոզմունքը, որ նախքան Անդրկովկասի հանրապետությունների անկախացումը Մեծ Բրիտանիան նախապատրաստական աշխատանքներ է տարել իր հենարանները ստեղծելու Անդրկովկասում՝ որպես պատվար պատերազմում իր դաշնակից ռուսական կայսրության, ինչպես նաև հայ ժողովրդի դեմ: Այս առումով, պաշտոնական Անգլիան աջակցում էր անգլիական մահմեդական կազմակերպություններին, որոնք ամեն կերպ փորձում էին նյութական օժանդակություն հասցնել Կովկասում իրենց հավատակից ժողովուրդներին: Անգլիացիներն ավելի տմարդի վարվեցին այն ժամանակ, երբ պատերազմի տարիներին Լոնդոնում Հայոց ցեղասպանության վերապրածներին օգնելու նպատակով ստեղծված «Լոնդոնի քաղաքապետի անվան հայ փախստականների օգնության հիմնադրամին» թույլատրեցին իր միջոցներից դրամ տրամադրել ազերի «սովյալներին»: Հիշենք միայն, որ այդ հիմնադրամը կոչված էր օժանդակելու Անդրկովկասում և այլուր ապաստանած, ցեղասպանությունից մազապուրծ, ավելի քան 400 հազար գաղթականների, որոնց մի մասը այրի կանայք, որբացած երեխաներ ու զառամյալ ծերունիներ էին, և նրանցից օրական մի քանի հարյուրը մահանում էին զրկանքներից, ցրտից, սովից և տարափոխիկ հիվանդություններից:

Դեռևս 1917 թ. «Բրիտանական կարմիր մահիկ» միության նախագահ Էմիր Ալին սկսեց իր անդադար դիմումներով բախել արտաքին գործերի նախարարության դռները, որպեսզի Լոնդոնի քաղաքա- պետի անվան հիմնադրամը օժանդակեր նաև Հայաստանի մահմեդական բնակչությանը: Էմիր Ալին հայցում էր նաև կառավարության աջակցությունը, որպեսզի հնարավոր լիներ կապ հաստատել Բաքվի մահմեդական բարեգործական ընդհանուր միության հետ՝ իրենց հիմնադրամի անունից նույնպես օժանդակություն ցուցաբերելու համար[17]: Լոնդոնի մահմեդականների հանգանակած միջոցներից բրիտանական կառավարության օգնությամբ սկսեց Բաքու փոխանցվել զգալի նյութական օժանդակություն[18]: Նշենք, որ Բաքվի բարեգործական ընդհանուր միության անդամներ էին երկու մու-սավաթական ղեկավարներ՝ բժիշկ Սուլթանովը և Համո բեկ Հաջինսկին, որոնք պետք է դառնային ոչ միայն թուրքական, այլև բրիտանական կառավարության հանձնակատարները՝ ընդդեմ Ղարաբաղի և ողջ Կովկասի հայության: «Լոնդոնի քաղաքապետի անվան հայ փախստականների օգնության

[16] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 200, գ. 211, թ. 63:
[17] **Նասիպեան Ա.,** *Բրիտանիա եւ Հայկական Հարցը (1915-1918 թթ.), Պէյրութ, 1994, էջ 66:*
[18] FO 371/3047/1579/folios 141-143.

հիմնադրամի» միջոցները բրիտանական իշխանությունների միջոցով հանձնվում էին նրանց[19]: Փաստաթղթերն, անտարակույս, հավաստում են, որ մուսավաթականների զինումը տեղի է ունեցել ոչ միայն անգլիական կառավարության թողտվությամբ, այլև ուղղակի օժանդակությամբ[20]:

Գալով Շուշի՝ Սուլթանովը հայտարարեց, որ իր նպատակը Զանգեզուրն ու Ղարաբաղն Ադրբեջանին ենթարկելն է: Սուլթանովը «վայրի դիվիզիայի» մի զորամաս ուղարկեց գրավելու Խանքենդի ռուսական ընդարձակ զորանոցները, ապա հայտարարեց, որ պետք է նաև զորանոցներ կառուցի Շուշիում[21]: Երբ հայերը բողոքեցին Շուշիում բրիտանական առաքելության առաջնորդ Մակ Մազոնին, վերջինս Սուլթանովի ձեռնարկները հիմնավորեց որպես արարք, որն ուղղված է զորանոցները մաքրելուն և դրանք նախապատրաստելուն, որպեսզի դրանցում, գալուն պես, տեղակայվեն անգլիական զորքերը[22]:

Սուլթանովն արդեն երկու օր էր, ինչ ժամանել էր Շուշի, երբ իր աշխատանքը սկսեց արցախահայության 4-րդ համագումարը: Այն տևեց փետրվարի 25-ից մինչև մարտի 6-ը: Մերժելով ընդունել Սուլթանովին և Ադրբեջանին ենթարկվելու որևէ պահանջ, համագումարն այդ մասին տեղեկացրեց անգլիական առաքելությանը: Համագումարը նշեց, որ Անգլիայի խրախուսանքով, հայ ժողովուր- դը միացավ Առաջին աշխարհամարտին՝ կրելով սոսկալի կորուստներ, ենթարկվելով անասելի ջարդերի ու ավերածությունների, իսկ Անգլիան Ղարաբաղի հայության ճակատագիրը հանձնում էր ոճրագործ սուլթանովներին[23]:

Ղարաբաղի Ազգային խորհուրդը սերտ կապեր էր պահպանում Զանգեզուրում գտնվող զորավար Անդրանիկի հետ՝ ամենայն մանրամասնությամբ ներկայացնելով արցախահայության գլխին կախված վտանգը: Արցախահայության 4-րդ համագումարից հետո ողջ Ղարաբաղում մթնոլորտը շիկացել էր, իսկ անգլիացիների նախաձեռնությամբ մուսավաթական կառավարությունը նոր ուժեր ուղարկեց Սուլթանովին, որպեսզի վերջինս հաշվեհարդար տեսնի արցախահայության հետ՝ կտրելով Ղարաբաղի կապը դրսի աշխարհի հետ[24]:

Անգլիացիների անմիջական սպառնալիքների և խոչընդոտների միջոցով կասեցվեց նաև 1918 թ. նոյեմբերի վերջերին զորավար Անդրանիկի կազմակերպած արշավանքը դեպի Ղարաբաղ, որը վճռորոշ նշանակություն կունենար իրեն կրնկակոխ հետևող մի քանի հազար գաղթական հայության փրկության համար, այլև կկասեցներ Ղարաբաղի հայաթափումն ու նրան Ադրբեջանին ենթարկելու փորձերը: 1918 թ.

---

[19] FO 371/3047/73229/folios 157-160.

[20] **Սարուխանյան Տ.,** Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում..., էջ 158:

[21] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 7:

[22] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 38, թ. 27:

[23] **Սիմոնյան Հր.,** նշվ. աշխ., էջ 491-493:

[24] Նույն տեղում, էջ 491:

նոյեմբերի 29-ին Գորիսի Տեղ գյուղից Անդրանիկը հարվածող զորամասի ու զանգեզուրյան ուժերի հետ, ի պատասխան արցախահայության օգնության կոչերի, սկսեց իր ռազմական հաղթարշավը դեպի Շուշի: Երկու-երեք օր տևած համառ կռիվներից հետո, գրավելով ճանապարհին ընկած մի շարք գյուղեր, հարվածող զորամասը անցավ Հագարո ու Զաբուղ գետերը և գրավեց ռազմական կարևոր նշանակություն ունեցող Մարկիզ լեռը: Գրավեց նաև Ավդալար փոքր գյուղաքաղաքը, որը Սուլթանովը վերածել էր ռազմականյանի: Մարկիզ լեռը և Ավդալարը գրավելով՝ արդեն կարելի էր «անարգել բարձրանալ Ղարաղլաղի բարձունքը, գնալ Թթու ջուր (Լիսագորսկ), իսկ այնտեղից առաջանալով մտնել Շուշի»[25]: Բայց վրա հասան անգլիացիները և դեկտեմբերի սկզբին կասեցրեցին Անդրանիկի արշավանքը դեպի Շուշի: Անդրկովկասում անգլիական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Թոմսոնը Բաքվից վերջնագիր ուղարկեց Անդրանիկին՝ պահանջելով նահանջել, դադարեցնել ռազմական գործողությունները, խոստանալով, որ ադրբեջանիցիներն այդուհետև որևէ ռազմական գործողություն չեն իրականացնի հայերի դեմ: Գեներալ Թոմսոնը զորավարին նախազգուշացրեց, որ նա անձամբ է պատասխանատվություն կրելու հետագա արյունահեղության համար[26]:

Անդրանիկի մուտքը Ղարաբաղ կասեցնելուց հետո Սուլթանովը սկսեց հայկական գյուղերի կոտորածը: Բաքվից անդադար քաղաքական ճնշում գործադրելու անհաջող փորձերից հետո անգլիացիները Ղարաբաղ գործուղեցին գնդապետ Շատելվորդին: Վերջինիս ժամանելու առթիվ 1919 թ. ապրիլի 23-ին Շուշիում գումարվեց Ազգային խորհրդի 5-րդ համագումարը, որի առաջին նիստում Շատելվորդն ու Սուլթանովը փորձեցին հայերին համոզել ենթարկվելու Ադրբեջանի իշխանությանը: Համագումարը մերժեց նաև այս պահանջը[27]: Սուլթանովը անգլիացիների հովանու ներքո սկսեց ողջ ուժերը կենտրոնացնել Շուշիի շրջակայքում՝ պարտադրելու Ղարաբաղի թաթարացումը: Մակ Մազոնի անմիջական ջանքերով Ազգային խորհրդի 7 ակտիվիստներ հունիսի սկզբին հեռացվեցին Շուշիից: Նրանց մեջ էին Եղիշե Իշխանյանը, Հովհաննես Թումյանը և Ս. Տեր-Աստվածատրյանը: Սուլթանովի նպատակը կրկին իրագործվեց անգլիացիների ձեռքով՝ քաղաքից հեռացնել ինքնապաշտպանության կազմակերպիչներին, ապա հաշվեհարդար տեսնել ըմբոստ ժողովրդի հետ: Հունիսի 4-ին սկսվեց հարձակումը Շուշիի վրա, բայց Մակ Մազոնը կանգնեցրեց այն: Սուլթանովը իր տրամադրության տակ եղած բազմահազար խուժանի զայրույթը շրջեց դեպի Շուշիի մերձակա հայաբնակ գյուղերը: Անգլիացիների աչքի առջև բազմահազար խուժանը կոտորեց Շուշիից քիչ հեռու գտնվող Ղայբաշիքենդ հայկական գյուղը, անասելի բռնություններ կատարեց կանանց և երեխաների նկատմամբ, գյուղը

---

[25] **Սիմոնյան Հր.,** *նշվ. աշխ., էջ 447-451:*

[26] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 52, թ. 2:*

[27] **Վրացեան Ս.,** *նշվ. աշխ., էջ 314:*

քարուքանդ արվեց և ավարի ենթարկվեց: Ավերվեցին նաև Կրկժան, Դաշքենդ և Դաշալթի գյուղերը[28]:

Ընդհանուր առմամբ, 1919 թ. հունիսին անգլիացիների աչքի առջև սպանվեցին մի քանի հարյուր հայեր, ավերվեցին վեց հայաբնակ գյուղեր: Այդ օրերին Շուշիի մերձակա հայաբնակ շրջաններում տեղի ունեցած հայերի կոտորածների վերաբերյալ նշանավոր պատմաբան Լեոն գրել է. «Ո՞վ է ասում, թե անգլիացիները չեն կոտորել տվել հայ ժողովրդին: Ով այդպիսի բան է ասում, նա սուտ է ասում»[29]: Անզոր և ամոթահար Մակ Մազոնը 1919 թ. հունիսի 12-ին Ղարաբաղում իր ներկայացուցչության և զինվորության հետ հեռացավ այնտեղից՝ իր հետ տանելով հայ ժողովրդի ատելությունը[30]:

Թուրքական արշավանքներից ավերված, հազարավոր գաղթականներով լի, սովի ու զրկանքի մեջ գտնվող Հայաստանի Հանրապետությունը ի վիճակի չէր զգալի օգնություն ցուցաբերել Ղարաբաղին: ՀՀ կառավարությունը բազմաթիվ բողոք-հեռագրեր ուղարկեց ինչպես մեծ տերությունների կառավարություններին, այնպես էլ Անդրկովկասում նրանց հանձնակատարներին:

1919 թ. մայիսին Ալ. Խատիսյանը հրավիրվեց Թիֆլիս՝ մասնակցելու Անդրկովկասում անգլիական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Թոմսոնի խորհրդակցությանը, որտեղ պետք է քննարկվեր նաև Ղարաբաղի հարցը: Ղարաբաղի հարցով հանդես եկող անգլիացի գնդապետ Շատելվորդը, խորհրդակցության անդամներից թաքցնելով Սուլթանովի կատարած գազանությունները, զարմանք էր հայտնում, թե ինչու հայերը չեն ճանաչում Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղի նկատմամբ: Խորհրդակցությանը մասնակցած դաշնակից երկրների բոլոր ներկայացուցիչները պաշտպանեցին Շատելվորդին: Ավելին, ՀՀ կառավարության ներկայացուցչի խիստ դիրքորոշմանն ի պատասխան, գեներալ Թոմսոնը հայտարարեց, որ «Ղարաբաղի գործերին միջամտելով՝ Հայաստանը կարծես թե պատերազմ է հայտարարում Անգլիային»[31]: Թոմսոնի հրավիրած խորհրդակցության արդյունքը եղավ այն, որ մայիսի 6-ին բրիտանական ռազմական ուժերի ներկայացուցիչները վերահաստատեցին Սուլթանովին՝ Ջեբրաիլի, Զանգեզուրի, Շուշիի, Ջիվանշիրի գավառներում գեներալ-նահանգապետ նշանակելու փաստը: Հայտարարվեց, որ վիճարկելի տարածքների, այդ թվում նաև Ղարաբաղի պատկանելության հարցը, կլուծվի Փարիզի խորհրդաժողովի կողմից: Բրիտանացիները հերթական անգամ պնդեցին, որ տեղի բնակչությունն «անվերապահորեն» պետք է ենթարկվի Սուլթանովի բոլոր հրամաններին, և որ դրանց չենթարկվելը «ամենավճռական կերպով կկանխարգելվի»[32]:

---

[28] Նույն տեղում, էջ 315-316:

[29] **Լեո,** Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 430:

[30] **Վրացեան Ս.,** նշվ. աշխ., էջ 316:

[31] Нагорный Карабах в 1918-1922 гг. (Сборник документов и материалов, Е., 1992, с. 186-187).

[32] Նույն տեղում, էջ 198:

Իսկ Ղարաբաղի հարցը Փարիզում դաշնակիցների ուշադրությանը այդպես էլ չարժանացավ, այն պատճառով, որ տերությունները չէին կարող հաշվի չնստել Անդրկովկասում իրենց շահերը ներկայացնող Անգլիայի հետ, որը Ղարաբաղը նվիրաբերել էր Ադրբեջանին[33]: Ղարաբաղի նման կարգավիճակը, չնայած ղարաբաղցիների չինազանդվելու բազմաթիվ ելույթներին, պահպանվեց մինչև 1920 թ. ապրիլի 28-ը՝ Ադրբեջանի խորհրդայնացումը: «Նման կարգավիճակ» ասելով, նկատի ունենք անգլիացիների հովանավորությամբ երկրամասի ադրբեջանացման փորձերը, իսկ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո այդ դերը ստանձնեց բոլշևիկյան Ռուսաստանը:

Ղարաբաղի հայաթափման փորձերի դիպուկ գնահատականը տվել է Անդրկովկասում դաշնակից տերությունների հանձնակատար գնդապետ Ռեյը, որը նշում է, որ Սուլթանովի ղեկավարության ուշ շրջանում, նաև «բրիտանացիների թողտվությամբ» չդադարեցին հայերի վրա հարձակումները, միտումնավոր կերպով նրանց պատկանող սննդամթերքի առգրավումը, որի հետևանքով «սովամահ եղան բազմաթիվ հայեր»: Ռեյի խոստովանությամբ. «Մոտավորապես 1919 թ. սեպտեմբերի վերջերին, ակնհայտ էր դարձել, որ Ադրբեջանը, թուրքական սպաների և թուրք թաթարների օգնությամբ, արշավանք էր նախապատրաստում Ղարաբաղի դեմ»: Ռեյն իր հաղորդագրության մեջ նշում էր, որ 1200 ասկյարներ իրենց հրանոթներով Եվլախից շարժվեցին դեպի Ղարաբաղ, իսկ Բաքվից նրանց օգնության եկան 1000 զինված հետևակայիններ: Այդ զորամիավորումները հոկտեմբերի 16-ին հասան Շուշի: Նրանց առաջնորդում էր իսլամական բանակի հրամանատար Նուրի փաշան: Ղարաբաղ էր շարժվում նաև Սուլթանովի եղբոր գլխավորած 4000-անոց զորախումբը Նախիջևանից: Ռեյի համոզմամբ, հարձակման նպատակներն էին՝ «1. Շարուրը և Նախիջևանը միացնել Ադրբեջանին՝ Ղարաբաղի շրջանը մաքրելով հայերից… 2. կամուրջ ստեղծել Ադրբեջանի և Թուրքիայի միջև, 3. ավարտել Բաքու-Ջուլֆա երկաթուղու կառուցումը, որը Երևան-Ջուլֆա երկաթուղու միջոցով ուղղակի կապի մեջ կպահեր Բաքուն Թուրքիայի հետ»: Նուրի և Էնվեր փաշաների գործուղումը Ադրբեջան հետապնդում էր այս ծրագրի իրականացումը[34]:

Թվում էր, թե Ադրբեջանի խորհրդայանցումը պետք է փոխեր ուժերի դասավորվածությունը: Մեծ Բրիտանիան, արդեն խաբված իր «թուրք-թաթարական դաշնակցից», սկսեց եռանդուն կերպով օգնել Հայաստանի կառավարությանը՝ վերջինիս կողմից բոլշևիզմի դեմ մղած պայքարում: Բայց ուշացած էր նաև այդ օգնությունը, քանի որ ոչ միայն Ղարաբաղի, Նախիջևանի և Զանգեզուրի, այլև ողջ Կովկասի վրա կուտակվում էին նոր ամպեր՝ հանձին «թուրք-բոլշևիկյան եղբայրության»:

---

[33] **Գալոյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 71:*

[34] *The National Archives of the USA (Washington), 860j. 01/180.*

Անվիճելի է այն փաստը, որ Ղարաբաղի հայաջնջման ու այն Ադրբեջանին հանձնելու պատասխանատվությունը հավասարապես, եթե ոչ ավելի, Խորհրդային Ռուսաստանի հետ կրում է նաև Մեծ Բրիտանիան: Այս քաղաքականության հետևանքը Շուշիի հայ բնակչության՝ նմանը չունեցող սպանդն էր: Ադրբեջանի խորհրդայնացման նախօրեին, 1920 թ. մարտին, անգլիական նենգ քաղաքականության հետևանքով, Շուշի ժամանած թուրք զորապետներ Նուրի և Հալիլ փաշաները, Խոսրով բեկ Սուլթանովի՝ տեղի ուժերի հետ հրդեհեցին քաղաքի հայկական թաղամասը՝ շուրջ 7 հազ. տուն, կոտորեցին հայ բնակչության (35 հազ.) մեծ մասին՝ թալանելով ողջ ունեցվածքը[35]:

Անգլիական հրապարակումները, փաստաթղթերը, ժամանակին մամուլում տեղ գտած հոդվածները վկայում են, որ անգլիացիները քաջատեղյակ էին Ղարաբաղի հայկականությանը և պատկանելությանը[36], իսկ «Ադրբեջան» անվանումը, անգլիական հրապարակումներում նախքան 1918 թ. տրվել է միայն Հյուսիսային Պարսկաստանի մի շարք շրջանների:

Ղարաբաղի հարցում Անգլիայի ոչ հայանպաստ քաղաքականությունը պայմանավորված էր ոչ միայն Բաքվի նավթին տիրելու անգլիական իշխող շրջանների ձգտումով, այլև՝ ռազմաքաղաքական կշռադատությամբ: Մեծ Բրիտանիան ավանդաբար Հայաստանը դիտել է որպես Ռուսաստանի դաշնակից, իսկ 1918-1920 թթ. ընթացքում պաշտպանեց մուսավաթական Ադրբեջանին, որովհետև այն պատվար էր՝ ընդդեմ Մերձավոր Արևելքի բրիտանական գաղութներին սպառնացող Ռուսաստանի[37]: Մուսավաթական Ադրբեջանի ղեկավարներն ու նրանց թուրք դաշնակիցները կարողացան ամրապնդել այդ կարծիքը:

Այսօր էլ Անգլիան անմասն չէ Անդրկովկասի տարածաշրջանում ընթացող քաղաքական գործընթացներին, իսկ արտաքուստ անտարբերությունը միայն մոլորեցնող է: Ղարաբաղի վերջին տարիների գոյապայքարի ընթացքում անգլիական շրջանները նյութապես նպաստել են Ադրբեջանին, պաշտոնական Անգլիայի թողտվությամբ: Նույն կերպ են վարվել Անգլիայում գործող մի շարք մահմեդական և «բարեգործական» կազմակերպություններ: Ադրբեջանի նավթային ներդրումային ծրագրերում անգլիական մասնաբաժինը գերազանցում է ցանկացած պետության մասնաչափը: Ադրբեջանի հետ «դարի պայմանագիրը» կնքած բրիտանական «Բրիթիշ Պեթրոլեում» նավթային կոնցեռնը, ըստ էության, պետություն է պետության մեջ: Միջազգային հարաբերություններում իր հրատապությամբ օրահարց է Իրանի դեմ անգլո-ամերիկյան հարձակումը, ուստի՝ արդի դյուսպերվիլների՝ դեպի Բաքու տանող ճանապարհը կարող է գնալով կարճանալ: Այդ հնարավոր ճանապարհը սպառնալիք է ոչ միայն մեր

[35] Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 8, Ե., էջ 600:
[36] FO 371/4951/folio 13.
[37] **Пипия Г. В.** *Политика Германии в Закавказье, Тбилиси, 1971, с. 134.*

ազգային շահերին, այլև՝ մեր գոյությանը: Ինչպես Ղարաբաղի Հանրապետության, այնպես էլ ողջ հայությանն ուղղված պատմության խորհուրդը մեկն է՝ Անգլիայի և մեր շահերը երբեք չեն համընկել, դրանք գրեթե միշտ հակասել են: Մեր համոզմամբ, անհրաժեշտ է մշտապես հոգ տանել, որ անգլիական «օգնության շտապող նավատորմը» հնարավորինս հեռու մնա Հայկական լեռնաշխարհի փրկված բեկորներին հանգրվանած հայ ժողովրդից:

ВЕЛИКОБРИТАНИЯ И ВОПРОС КАРАБАХА (1918-1920 ГГ.)

САРУХАНЯН Т. Н.

Резюме

Начиная с 1917-го года и вплоть до советизации Армении и Азербайджана Великобритания являлась главным посредником в разрешении конфликта между враждующими сторонами. Анализ первоисточников и материалов, выявленных в последние годы из британских архивов, явствует о том, что можно было избежать массового истребления армян в Баку, в селах Карабаха и в г. Шуши, если бы Британия изъявила желание воспрепятствовать резне христианского населения, в частности, армян на Кавказе.

Руководствуясь собственными национальными интересами, Великобритания сыграла весьма негативную роль в вопросе предотвращения конфликта и содействия мирному сосуществованию многонационального населения региона.

GREAT BRITAIN AND THE KARABAGH QUESTION (1918-1920)

T. SARUKHANYAN

Abstract

The paper studies the emergence of ethno-political conflict between the Tartar and the Armenian population in the context of British policy towards the Caucasus that emerged after the Russian Revolution in 1917. From 1917 to 1920, until the Sovietization of the Republics of Armenia and Azerbaijan, Britain was the main mediator in proposing a resolution to the escalated and hostile relationship between Armenia and Azerbaijan.

Based on newly founded British archival documentation, the paper concludes that the massacres of the Armenian population in Baku, in the villages of Karabagh and in the city of Shusha could have been avoided if Britain had expressed a desire to prevent the slaughter of the Christian Armenians in the Caucasus. Driven by its own national interests, Britain did play a negative role, hindering the peaceful coexistence of multi-ethnic communities in the Caucasus.